ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 ապրիլի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

43
(3252)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-Ն ՄԵՐԺԵՑ ՆԱԵՎ ԵՎՐՈՊԱՅԻՆ

Երեկ Ազգային Ժողովի արտահերթ նիստում 67 կողմ, 6 դեմ եւ 0 ձեռնպահ ձայներով երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվեց «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը: Ընդ որում, 2 անգամ ընդմիջում հայտարարվեց, որ ՔՊ-ն կարողանա իր անդամներին հավաքել ԱԺ-ում: 40 րոպե անց կարողացան, ծայրը ծայրին հասցնելով, անցկացնել նախագիծը:

Նախագծի ընդունումը նշանակում է, որ «Ուժեղ Հայաստան Սամվել Կարապետյանի հետ» դաշինքը չի կարող գրանցվել այդ անունով:

Հատկանշական է, որ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի ընտրական հարցերի վարքականոնում ամրագրված է սկզբունք, ըստ որի՝ ընտրություններից մեկ տարի առաջ ընտրական օրենսգրքում հիմնարար փոփոխություններ չպետք է կատարվեն:

Մյուս կարեւոր հանգամանքն այն է, որ ընտրական օրենսգրքային փոփոխությունները, որպես կանոն, պետք է ընդունվեն լայն քաղաքական կոնսենսուսով, այսինքն՝ խորհրդարանական բոլոր հիմնական ուժերի համաձայնությամբ: Մինչդեռ այս դեպքում «Քաղաքացիական պայմանագիրը» միանձնյա որոշեց արգելել անձնանունների օգտագործումը դաշինքների գրանցման եւ քվեաթերթիկներում դրանց արտացոլման հարցում: Առանց կոնսենսուսի:

Այսպիսով՝ եվրոպական արժեքներին եւ ԵՄ անդամակցության ձգտումներին հաճախ հղում անող իշխանությունը փաստացի անտեսեց հենց եվրոպական կառույցների սահմանած մոտեցումներն ու քաղաքական էթիկայի կարեւոր նորմերը՝ շրջանցելով կոնսենսուսի պահանջը եւ կատարելով միակողմանի փոփոխություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Եղիազար Վարդանյանի հայտարարագրերը եւ պարզել մի շարք ուշագրավ տվյալներ նրա գույքի, եկամուտների եւ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ: Նշենք, որ Եղիազար Վարդանյանը 2024 թվականի մարտի 21-ին նշանակվել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահ, իսկ պաշտոնը ստանձնել է 2024 թվականի մարտի 22-ին: Ըստ հայտարարագրի՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ Վարդանյանն ունեցել է՝ հողամաս Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում (ձեռք բերված 02/08/2011, գնմամբ), անհատական բնակելի տուն Երեւանում (ձեռք բերված 25/04/2012, գնմամբ): Նա նաեւ ունեցել է՝ «Մերարմինվեսթ» ՍՊԸ-ին տրամադրված փոխառություն՝ 27,109,152.5 դրամ, բանկային հաշիվներում՝ 940,171 դրամ, կանխիկ միջոցներ՝ 14,400 եվրո, 26,800 ԱՄՆ դոլար եւ 39,500,000 դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

E-draft հարթակից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանրային քննարկման է ներկայացվել «6 եւ ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը եւ ծրագրի իրականացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Այն ներկայացվել է 02.04.2026-ին, իսկ հանրային քննարկման վերջնաժամկետը սահմանված է 17.04.2026-ը: «Ժողովուրդ»-ը ուսումնասիրեց ներկայացված նախագիծը եւ պարզեց, որ այն ուղղված է բազմազավակ ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանը եւ բնակարանային հասանելիության բարձրացմանը: Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ ներկայում գործող ծրագրերը լիարժեք չեն լուծում նման ընտանիքների խնդիրները, քանի որ գործող աջակցությունը հիմնականում միանվագ է եւ չի ծածկում հիփոթեքային վարկերի ամբողջական բեռը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



ԱՄՆ-ն եւ Իրանը պայմանավորվել են երկշաբաթյա հրադադարի շուրջ, որի ընթացքում թույլատրվելու է նավագնացությունը Հորմուզի նեղուցով՝ ռազմավարական կարեւոր ուղի, որի միջոցով Պարսից ծոցից ուղարկվում են նավթային եւ այլ բեռներ: Համաձայնությունը ձեռք է բերվել այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն եւ Իսրայելը համակարգված հարվածներ հասցրին Իրանի մի շարք ռազմավարական օբյեկտների: Հրադադարի մասին հայտարարությունից ժամեր առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը սպառնացել էր, որ «մի ամբողջ քաղաքակրթություն կվերանա այս գիշեր», եթե Իրանը չվերաբացի նեղուցը: Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը, որը միջնորդում է բանակցությունները, հայտարարել է, որ հրադադարը ուժի մեջ է մտել անմիջապես հայտարարությունից հետո: Թրամփը նշել է, որ համաձայնել է «երկու շաբաթով դադարեցնել Իրանի դեմ ռմբակոծություններն ու հարձակումները», եթե Թեհրանը բացի Հորմուզի նեղուցը: Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն արդեն հասել է իր բոլոր ռազմական նպատակներին: Իրանը համաձայնել է երկու շաբաթով ապահովել նավերի անցումը նեղուցով՝ գործընթացը համակարգելով իր զինված ուժերի միջոցով: Թեհրանը ներկայացրել է նաեւ 10 կետից բաղկացած ծրագիր:

⇨ ***էջ 3***

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍԱՐ ՉԷ»

Ապրիլի 7-ին «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամները մամուլի ասուլիս էին հրավիրել ՀՀ ԱԺ-ի դիմաց՝ ներկայացրել իրենց բողոքն առ այն, որ ԱԺ-ն արտահերթ նիստ է իրականացնում Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ իրականացնելու համար: Այն մասնավորապես ենթադրում է դաշինքներում, կուսակցություններում չներառել անձնանուններ, իսկ մինչ այդ «Ուժեղ Հայաստան»-ը հայտարարել էր, որ մասնակցելու են ընտրություններին «Ուժեղ Հայաստան՝ Սամվել Կարապետյանի հետ» դաշինքով:

Նշենք, որ նախագիծն ապրիլի 7-ին ընդունվել է 66 կողմ, 16 դեմ ձայնով:

Այս փոփոխությունների վերաբերյալ ArmLur.am-ը զրուցել է փաստաբան Հովսեփ Սարգսյանի հետ:



- Պարոն Սարգսյան, Ազգային Ժողովում նախագիծ է քննարկվում Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ անելու համար: «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամները նշում էին, որ դա ուղղված է կոնկրետ Սամվել Կարապետյանի դեմ: Ի՞նչ է կատարվում Սամվել Կարապետյանի շուրջ:

- Օգտագործվում են թե՛ օրենսդրական, թե՛ վարչական ռեսուրսներն ու լծակները, որպեսզի խուսափեն դաշինքի անվանումից կամ թույլ չտան, որ այն լինի նախապես նախատեսված ձեւով: Ըստ էության, արվում է ամեն ինչ՝ գործընթացը խանգարելու համար: Օգտագործվում են բոլոր հնարավոր գործիքակազմերը՝ վարչական, իրավական եւ օրենսդրական:

- Սակայն պատգամավորները նշում են, որ ընդդիմության ասածները պետք չէ լուրջ ընդունել, եւ իրենք որեւէ վախ չունեն, հատկապես Սամվել Կարապետյան-ից: Ի՞նչ կասեք այս մասին:

- Եթե պատգամավորները նման հայտարարություններ են անում, ապա թող հստակ ասեն՝ ո՞ւմ նախագիծն է ներկայացվել խորհրդարան: Եթե իսկապես նման մտավախություններ չկան, ապա ինչո՞ւ նախագիծը բերվեց հատկապես այն ժամանակահատվածում, երբ ընդամենը ժամեր էին մնացել համապատասխան գրանցումները կատարելու համար:

- Այսինքն՝ կարծում եք, որ վախերի մասին խոսում են ոչ միայն խոսքով, այլ նաեւ գործողություններով:

-Այո՛, հենց այդպես: Վախերի մասին խոսում են ոչ միայն խոսքով, այլ արդեն նաեւ գործողություններով, որոնք ըստ էության եւ փաստացի դրա վկայությունն են:

- Գտնո՞ւմ եք, որ մրցակցությունը հավասար պայմաններում է:

- Իհարկե մրցակցությունը հավասար չէ, որովհետեւ այս դեպքում ակնհայտ է, որ իրենք ունեն օրենսդրական եւ վարչական ռեսուրսներ, համապատասխան գործիքակազմ, իսկ «Ուժեղ Հայաստան»-ը, ես վստահ եմ, ունի ժողովրդի մեծամասնության քվեն:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՆԱԽԱԳԻԾ

Նախագծի նպատակը ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման գործարքների՝ ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնների վերանայումն է՝ ոսկեգործության ոլորտի զարգացման համար նպաստավոր հարկային միջավայր ձեւավորելու ակնկալիքով: ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը ապրիլի 8-ի նիստում առաջին ընթերցմամբ քննարկել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագիծը ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանը: Առաջարկվում է սահմանել, որ ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրեր արտադրողի կողմից արտադրված՝ ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի եւ տվյալ իրի արտադրության համար օգտագործված ոսկու եւ թանկարժեք քարերի ձեռք բերման գնի դրական տարբերությունը, բայց ոչ պակաս, քան օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի 10 տոկոսը:

Ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի առեւտրական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ով հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ այդ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի եւ տվյալ իրի ձեռք բերման գնի (ներառյալ՝ԱԱՀ-ն) դրական տարբերությունը: Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ առաջարկվող կարգավորումների կիրառության պարագայում հաճախ կլինեն իրավիճակներ, երբ պետական բյուջե վճարվող ԱԱՀ-ի գումարներն ավելի փոքր են, քան հաշվանցվող ԱԱՀ-ի գումարները (որի պարագայում վերջնարդյունքում կձեւավորվեն պետական բյուջեից վերադարձման ենթակա ԱԱՀ-ի գումարներ)՝ նախագծով առաջարկվում է նաեւ ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի առեւտրական գործունեությամբ զբաղվող անձանց մասով սահմանափակել ոսկուց եւ թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման գործարքներին վերագրվող ձեռքբերումների մասով մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշվում կամ մաքսային հայտարարագրում կամ ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման իրավունքը:

«Մենք համոզված ենք, որ այս փոփոխությունները մեծապես նպաստելու են այս ոլորտների զարգացմանը, քանի որ առաջարկը ստացել ենք ոսկեգործության եւ ադամանդագործության ոլորտի մեր տնտեսավարող սուբյեկտներից՝ որպես հավաքական առաջարկ»,- ասել է փոխնախարարը: Նա հավելել է, որ նախագիծը քննարկված է ոլորտի տնտեսավարողների կողմից եւ շատ սպասված է:

Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել նախագծին, այն նախատեսվում է ընդգրկել ԱԺ առաջիկա հերթական նիստերի օրակարգի նախագծում:

ՀԱՆՁՆՎԵԼ Է ՍԴ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆԸ

Տեղի է ունեցել Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնը ստանձնած դատավոր Վլադիմիր Վարդանյանի ներկայացումը Բարձր դատարանի դատավորներին եւ աշխատակազմին: Արարողակարգային միջոցառման մեկնարկին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը, ներկայացնելով դատավորին, մաղթել է արդյունավետ պաշտոնավարում՝ վստահություն հայտնելով, որ դատավոր Վլադիմիր Վարդանյանն իր ամենօրյա գործունեությամբ կնպաստի մեր երկրում սահմանադրական արդարադատության, իրավունքի գերակայության եւ սահմանադրականության ամրապնդմանը:

Վլադիմիր Վարդանյանը նշել է, որ դատավորի կարգավիճակով Բարձր դատարան վերադառնալն իր համար կրկնակի պարտավորեցնող է, քանի որ իր մասնագիտական ուղու զգալի մասն անցել է Սահմանադրական դատարանում՝ ընդգծելով, որ ջանք չի խնայելու իր փորձն ու մասնագիտական կարողությունները Բարձր դատարանի գործունեության արդյունավետությանը ծառայեցնելու համար: Միջոցառման ընթացքում Սահմանադրական դատարանի դատավոր Վլադիմիր Վարդանյանին հանձնվել է Սահմանադրական դատարանի դատավորի պատմուճանը:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ

Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Արտեմ Ասատրյանին եւ Պետգույքի կառավարման վարչության նախկին պետ, ՀՀԿ անդամ Արման Սահակյանին:

Հակակոռուպցիոն կոմիտեից, լրատվամիջոցների հարցմանն ի պատասխան, հայտնեցին. «Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու մեղադրանքներով ձերբակալվել են մի շարք անձինք, այդ թվում՝ Պետական գույքի կառավարման վարչության պետի պաշտոնը զբաղեցրած անձը եւ այլ նախկին բարձրաստիճան պաշտոնյաներ: Նախաքննության շահերից ելնելով՝ այլ տեղեկատվություն չենք կարող տրամադրել»:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՐՎԱԾԻ ՏԱԿ Է ԴՆՈՒՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի՝ Իրանի դեմ հարվածները երկու շաբաթով հետաձգելու որոշումը սուր քննադատության է արժանացել՝ առաջացնելով հարցեր Վաշինգտոնի վստահելիության վերաբերյալ:

Քաղաքական վերլուծաբանների մի մասը համոզված է, որ նախագահի հերթական կոշտ հայտարարությունից հետո հետեւած նահանջը ցույց է տալիս ոչ թե հաշվարկված դիվանագիտություն, այլ անհետեւողականություն: Նրանց կարծիքով՝ Թրամփը կրկին օգտագործում է սպառնալիքների լեզուն, սակայն չի իրականացնում դրանք, ինչն աստիճանաբար արժեզրկում է նրա խոսքը միջազգային ասպարեզում:

Քննադատները հատկապես շեշտում են «TACO» (Trump Always Chickens Out) երեւույթը՝ նշելով, որ այս անգամ եւս նախագահը նահանջել է իր իսկ սահմանած կոշտ գծերից: Նրանց գնահատմամբ՝ նման վարքագիծը կարող է ստեղծել տպավորություն, որ ԱՄՆ-ի սպառնալիքները այլեւս չեն ընկալվում որպես լուրջ ազդակ:

Փորձագետների մի մասի կարծիքով՝ այս զարգացումը կարող է երկարաժամկետ հետեւանքներ ունենալ. համաշխարհային առաջնորդները կարող են ավելի ազատ գործել՝ վստահ լինելով, որ Վաշինգտոնը միշտ չէ, որ կանցնի կտրուկ քայլերի:

Հատկանշական է, որ նախկինում հենց Թրամփն էր քննադատում Բարաք Օբամային՝ Սիրիայի հարցում «կարմիր գծից» հետ կանգնելու համար: Սակայն ներկայիս իրավիճակը, ըստ դիտորդների, հիշեցնում է նույն այն քաղաքական մոտեցումը, որը նա ժամանակին անվանում էր թուլություն:

Այս ֆոնին հարցը մնում է բաց. արդյոք սա հաշվարկված դադար է՝ բանակցությունների համար, թե՞ հերթական հետքայլ, որը կխորացնի վստահության ճգնաժամը ԱՄՆ-ի նկատմամբ:

ԹԵՀՐԱՆԸ «ԱՂԱՉԵԼ Է»

ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը հայտարարել է, որ Իրանը դիմել է Վաշինգտոնին՝ խնդրելով դադարեցնել ռազմական գործողությունները: Նրա խոսքերը հնչել են բրիֆինգի ընթացքում, որի հեռարձակումը հասանելի է եղել YouTube-ում:

Հեգսեթի խոսքով՝ Իրանը տասնամյակներ շարունակ սպառնալիք է եղել ԱՄՆ-ի համար, սակայն իրավիճակը փոխվել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ղեկավարությամբ: «Իրանը աղաչում էր հրադադար, եւ դա բոլորին հայտնի է», - նշել է Պենտագոնի ղեկավարը՝ընդգծելով, որ «Epic Fury» գործողությունը, ըստ ԱՄՆ-ի, դարձել է իրական ռազմական հաղթանակ:

Ավելի վաղ Թրամփը հայտարարել էր, որ համաձայնել է Իրանի հետ երկշաբաթյա հրադադարի՝ հավելելով, որ կողմերը մոտ են երկարաժամկետ խաղաղության համաձայնագրի կնքմանը: Միաժամանակ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը ուղերձ էր հղել Իրանի ղեկավարությանը՝ցանկանալով հաղթահարել առաջացած ծանր փորձությունները:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

ԱՄՆ–ԻՐԱՆ ԵՐԿՇԱԲԱԹՅԱ ՀՐԱԴԱԴԱՐ

ԱՄՆ-ն եւ Իրանը պայմանավորվել են պայմանական երկշաբաթյա հրադադարի շուրջ, որի ընթացքում թույլատրվելու է նավագնացությունը Հորմուզի նեղուցով՝ կարեւոր ռազմավարական ուղի, որով անցնում են նավթային եւ այլ բեռներ Պարսից ծոցից:

Համաձայնությունը ձեռք է բերվել ավելի քան մեկ ամիս անց այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն եւ Իսրայելը համակարգված հարվածներ էին հասցրել Իրանին: Հրադադարի մասին հայտարարությունից ժամեր առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը սպառնացել էր, որ «մի ամբողջ քաղաքակրթություն կվերանա այս գիշեր», եթե Իրանը չվերաբացի նեղուցը:

Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը, որը միջնորդում է բանակցությունները, հայտարարել է, որ հրադադարը ուժի մեջ է մտել:

Կողմերի հայտարարությունները

Թրամփը նշել է, որ համաձայնել է «երկու շաբաթով դադարեցնել Իրանի դեմ ռմբակոծություններն ու հարձակումները», եթե Թեհրանը բացի Հորմուզի նեղուցը: Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն արդեն հասել է իր բոլոր ռազմական նպատակներին:

Իրանը, իր հերթին, համաձայնել է երկու շաբաթով ապահովել նավերի անցումը նեղուցով՝ գործընթացը համակարգելով իր զինված ուժերի միջոցով:

Թեհրանը ներկայացրել է նաեւ 10 կետից բաղկացած ծրագիր, որի կարեւոր կետերը ներառում են՝

- ռազմական գործողությունների լիակատար դադարեցում Իրանում, Իրաքում, Լիբանանում եւ Եմենում,
- Իրանի դեմ պատժամիջոցների ամբողջական վերացում,
- ԱՄՆ-ում սառեցված իրանական ակտիվների վերադարձ,
- Իրանի վերականգնման ծախսերի փոխհատուցում,
- եւ պարտավորություն՝ չձգտելու միջուկային զենքի:

Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհուրդը հայտարարել է, որ «ռազմադաշտում ձեռք բերված հաղթանակը պետք է ամրապնդվի քաղաքական բանակցություններով»:

Իսրայելի դիրքորոշումը

Հրադադարի հայտարարությունից կարճ ժամանակ անց Իսրայելում հնչել են օդային տագնապի ազդանշաններ: Իսրայելի բանակը հայտնել է Իրանից արձակված հրթիռների խոցման մասին:

Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահուն հայտարարել է, որ երկիրը աջակցում է Թրամփի որոշմանը՝ պայմանով, որ Իրանը անմիջապես բացի նեղուցը եւ դադարեցնի հարձակումները ԱՄՆ-ի, Իսրայելի եւ տարածաշրջանի այլ երկրների դեմ:

Միեւնույն ժամանակ նշվել է, որ հրադադարը չի տարածվում Լիբանանի վրա, որտեղ Իսրայելը շարունակում է գործողությունները «Հեզբոլլահի» դեմ:

Ինչ է սպասվում

Պակիստանը կողմերին հրավիրել է բանակցությունների Իսլամաբադ քաղաքում՝ վերջնական համաձայնության հասնելու նպատակով:

Սակայն բանակցությունները խոստանում են բարդ լինել. արդեն իսկ կողմերը տարբեր կերպ են մեկնաբանում հրադադարի պայմանները: Վերջին մեկ տարվա ընթացքում ԱՄՆ-ն եւ Իրանը երկու անգամ բանակցություններ են անցկացրել, որոնք ավարտվել են լարվածության սրմամբ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՍՏԱՏԵԼ Է

Պակիստանի վարչապետ Շեհբազ Շարիֆը իր գրասենյակի կողմից տարածված հայտարարության մեջ նշել է, որ Իրանից հաստատում է ստացել, որ երկիրը կմասնակցի Իսլամաբադում կայանալիք բանակցություններին: Շարիֆը նշել է, որ Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը հաստատել է, որ Իրանը կմասնակցի ԱՄՆ-ի հետ հակամարտությունը կարգավորելու նպատակով ընթացող բանակցություններին: Ավելի վաղ Շարիֆը հայտարարել էր, որ պատվիրակություններին հրավիրել է ուրբաթ օրը Պակիստանի մայրաքաղաքում կայանալիք բանակցությունների: Թեեւ իրանական պետական լրատվամիջոցները հաղորդել են, որ բանակցությունները կարող են երկարաձգվել, սակայն նրանք նշել են, որ ԱՄՆ-ի հետ բանակցությունները չեն նշանակում պատերազմի ավարտ:

ԴԻՏԱՐԿՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՃՆՇՈՒՄ

Bloomberg-ը՝ հղում անելով աղբյուրներին, հաղորդում է, որ Թրամփի վարչակազմը քննարկում է Իրանի նավթարդյունաբերության վրա վերահսկողություն սահմանելու հարցը, մասամբ՝ որպես առեւտրային բանակցություններում Չինաստանի վրա ճնշումը մեծացնելու միջոց: Գործակալության տվյալներով՝ Վաշինգտոնի վարչակազմը քննարկում է Չինաստանի դիրքերի թուլացումը՝ Վենեսուելայում եւ Մերձավոր Արեւելքում ամերիկյան գործողությունների հետեւանքով: Պեկինը նավթի խոշոր ներմուծող է եւ, ըստ Bloomberg-ի, տառապում է Հորմուզի նեղուցում նավարկության խնդիրներից:

Միեւնույն ժամանակ, նշում է գործակալությունը, Չինաստանը տարիներ շարունակ պատրաստվել է նման սցենարի՝ կուտակելով իր ռազմավարական պաշարները եւ զարգացնելով սեփական էներգետիկ ոլորտը:

Ավելի վաղ Չինաստանի արտաքին գործերի նախարար Վան Ին նշել էր, որ Պեկինը կոչ է անում հարգել Պարսից ծոցի երկրների ինքնիշխանությունը եւ ապահովել նավագնացության եւ էներգետիկ օբյեկտների անվտանգությունը:

ՀՆԱՐԱՎՈՐ ԿԼԻՆԻ

Հորմուզի նեղուցով անցումը հնարավոր կլինի Իրանի եւ նրա հակառակորդների միջեւ հրադադարի հաստատումից երկու շաբաթվա ընթացքում, հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին:

«Հորմուզի նեղուցով անվտանգ անցումը հնարավոր կլինի երկու շաբաթվա ընթացքում՝ Իրանի զինված ուժերի հետ համակարգված աշխատանքի շնորհիվ եւ առկա տեխնիկական սահմանափակումները հաշվի առնելով», - գրել է նա X-ում:

Նա հավելել է, որ «եթե Իրանի վրա հարձակումները դադարեն, Իսլամական Հանրապետության զինված ուժերը նույնպես կդադարեցնեն իրենց պաշտպանական հարձակումները»:

ԱՄՆ–Ն ԿՏՐՈՒԿ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է

ԱՄՆ ռազմածովային ուժերը նախատեսում են 2027 ֆինանսական տարվա համար շուրջ 1200 տոկոսով ավելացնել Tomahawk հրթիռների գնումը՝ Իրանում իրականացված «Epic Fury» ռազմական գործողության ընթացքում պաշարների սպառման ֆոնին: Այս մասին հայտնում է Defense News-ը՝ ներկայացնելով ԱՄՆ ռազմածովային ուժերի բյուջետային հայտը Կոնգրեսին: Ըստ հրապարակման՝ ՎՄՆ-ն խնդրել է ֆինանսավորում հատկացնել 785 Tomahawk հրթիռների ձեռքբերման համար՝ավելի քան 3 միլիարդ դոլարի չափով, որի մեջ ներառված է նաեւ մոտ 1.5 միլիարդ դոլար արդիականացման ծախսերի համար: Համեմատության համար նշվում է, որ 2026 թվականին Կոնգրեսը հաստատել էր ընդամենը 58 հրթիռի գնում՝257 միլիոն դոլար արժեքով: Բացի այդ, 2027-ի բյուջեով նախատեսվում է ձեռք բերել նաեւ 494 AMRAAM միջին հեռահարության «օդ-օդ» դասի հրթիռ՝ շուրջ 800 միլիոն դոլարով: Հաղորդվում է, որ ընդհանուր առմամբ ԱՄՆ ռազմածովային ուժերը նախատեսում են 2027 թվականին զենքի գնումների համար ծախսել ավելի քան 22 միլիարդ դոլար՝ գրեթե կրկնապատկելով նախորդ տարվա ցուցանիշը: Միաժամանակ, The National Interest պարբերականը ավելի վաղ գրել էր, որ Իրանում գործողության առաջին 72 ժամում ԱՄՆ-ը սպառել է Tomahawk հրթիռների հնգամյա պաշարը, ինչը դարձել է գնումների կտրուկ աճի հիմնական պատճառը:

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ

ՀԷՑ-Ը ԴԻՄՈՒՄ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ՍԴ

«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ն դիմում է ներկայացրել ՍԴ՝ վիճարկելով «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի՝ լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները ժամանակավոր կառավարչին անցնելու վերաբերյալ դրույթի սահմանադրականության հարցը:

«Փաստինֆո»-ի հաղորդմամբ՝ ՍԴ դատավոր Վլադիմիր Վարդանյանն ինքնաբացարկ է հայտնել սույն գործով՝ նշելով, որ իր մասնակցությունը քննությանն անհնարին է, քանի որ կանխակալ վերաբերմունք ունի որպես կողմ հանդես եկող անձի, նրա ներկայացուցչի, դատավարության այլ մասնակիցների նկատմամբ: Աշխատակարգային այս որոշումը կայացվել է ապրիլի 3-ին:

Հիշեցնենք, որ ՍԴ-ն ավելի վաղ խորհրդարանական ընդդիմության դիմումի հիման վրա քննարկել էր «ՀԷՑ»-ը խլելու մասին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ որոշում էր կայացրել՝ վիճարկվող դրույթները ճանաչելով Սահմանադրությանը համապատասխան: Այդ գործով խորհրդարանական ընդդիմությունը պնդում էր, որ ՀԾԿՀ-ն ստացել է լիազորություն՝ ուղղակիորեն դադարեցնելու լիցենզիան՝ առանց դատարան դիմելու, ինչը խախտում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ դատական կարգով սեփականությունից զրկելու պահանջը: Մասնավորապես, Դիմողի համոզմամբ՝ առանց լիցենզիայի տնտեսվարող սուբյեկտը, ձեւական առումով պահպանելով իր գույքը, ընդհանրապես չի կարող այն օգտագործել իր ֆունկցիոնալ նպատակին համապատասխան, ուստի՝ տվյալ պարագայում գույքի օգտագործման իրավազորության վերացումը հավասարազոր է սեփականությունից զրկելուն: Դիմողը պնդում է, որ էներգետիկայի ոլորտում գործող ընկերությունների լիցենզիաները եւս պետք է դիտարկվեն որպես սեփականության իրավունքի օբյեկտ, իսկ քանի որ լիցենզիայից զրկումը հանդիսանում է սեփականությունից զրկում, ապա Հանձնաժողովին առանց դատարան դիմելու լիցենզիայի գործողությունը դադարեցնելու լիազորության ընձեռումը հակասում է Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասին, եւ բացի դրանից, Հանձնաժողովի կողմից լիցենզիայի դադարեցման դեպքում չկա արդյունավետ դատական վերահսկողության կառուցակարգ: Բացի այդ, պատգամավորները նկատել են, որ էներգետիկայի ոլորտի տնտեսվարողի բաժնեմասերի եւ ակտիվերի նկատմամբ Կառավարության ընդհանուր նախապատվության իրավունքի դրույթն անհամատեղելի է Սահմանադրության հետ, քանի որ անհամաչափ միջամտություն է տնտեսական գործունեության ազատությանը եւ սեփականության իրավունքին: Այդուհանդերձ, ՍԴ-ն որոշել է, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

Այժմ եւս մեկ դիմում է ներկայացվել ՍԴ՝ ՀԷՑ ՓԲԸ կողմից, որով վիճարկվում է «Էներգետիկայի մասին» օրենքի 52.1-ին հոդվածի 3-րդ մասի՝ լիցենզավորված անձի գործադիր մարմնի բոլոր լիազորությունները ժամանակավոր կառավարչին անցնելու մասով Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Թե արդյոք դիմումը վարույթ ընդունվել է, թե ոչ՝ դեռեւս հայտնի չէ:

ՔՆՆԱՐԿԵԼ Է

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն այսօր ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենի գլխավորած պատվիրակությանը:



Աննա Վարդապետյանը ողջունել է Դեյվիդ Ալենին ՀՀ գլխավոր դատախազությունում, բարձր է գնահատել մի շարք ուղղություններով Հայաստանում ԱՄՆ դեսպանության հետ փոխգործակցությունն ու ընդգծել, որ Հայաստանում ԱՄՆ դեսպանությունը ՀՀ դատախազության վստահելի գործընկերն է. այդ մասին են վկայում 2025 թվականին ամերիկյան կողմի ներկայացուցիչների հետ ՀՀ դատախազության ներկայացուցիչների հանդիպումների հաճախականությունն ու արդյունավետությունը:

ՀՀ-ում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատարը արդյունավետ է գնահատել ՀՀ դատախազության հետ փոխգործակցությունը եւ ՀՀ գլխավոր դատախազի հետ քննարկել է երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, որոնք վերաբերել են քրեական վարույթների շրջանակում իրավական օգնությանը, հանձնումներին եւ այլն:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլ թեմաների, անդրադարձ է կատարվել Հայաստանում հարուցված քրեական գործի շրջանակներում Գլխավոր դատախազության եւ ԱՄՆ իրավասու մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության արդյունքում՝ ԱՄՆ իրավասու դատարանի հանցավոր ծագում ունեցող գույք դիտարկվող՝ ՀՀ ֆինանսների նախկին նախարար Գագիկ Խաչատրյանի ընտանիքին պատկանող ԱՄՆ Լոս Անջելեսում գտնվող առանձնատան վաճառքից ստացված դրամական միջոցների գերակշիռ մասը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու ընթացքին եւ ժամկետներին:

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՇԱՆՏԱԺԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՈՎ ՀԱՐԿԱԴՐԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում ավարտվել է անչափահասների կողմից մեկ այլ անչափահասի սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելու, շանտաժի եղանակով զգալի չափերով շորթում կատարելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ անչափահասները 2025 թվականի մարտից մինչեւ հունիսն ընկած ժամանակահատվածում անչափահաս տուժողից շանտաժով՝ վերջինիս հետ ունեցած սեռական բնույթի գործողությունների մասին տեղեկություններ տարածելու սպառնալիքով, պահանջել են՝ ընդհանուր 60 հզր ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, նախաքննության ընթացքում կատարված մի շարք ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ անչափահասները 16 տարին չլրացած տուժողին հարկադրել են սեքսուալ բնույթի գործողություններ կատարել:

Հաշվի առնելով, որ անչափահասներից մեկը հանցագործության սուբյեկտ չի հանդիսանում, այսինքն՝ չի հասել նշված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքին, վերջինիս նկատմամբ որոշում է կայացվել Քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ:

Անչափահասներից մեկի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (շորթումը), 199-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (ֆիզիկական ներգործությունը), իսկ մյուսի նկատմամբ՝258-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (շորթումը):

Նրանց նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է վարչական հսկողությունը, դաստիարակչական հսկողությունը եւ բացակայելու արգելքը:

Հանցանք ծնող պատճառները պարզելու նպատակով միջնորդագրեր են ներկայացվել համայնքի ղեկավարին եւ ՆԳՆ համայնքային ոստիկանության գլխավոր վարչության բաժնի պետին:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ապրիլի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է թմրանյութի հայտնաբերման 18 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՆՁՆԵԼ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարտի 2-ին որոշել է Անահիտ Ջուլհակյանին ազատել Բերդի թիվ 1 հիմնական դպրոցի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ մարտի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

Մարզպետը նույն օրը որոշել է Շուշանիկ Ջուլհակյանին 2026թ. մարտի 2-ից նշանակել նույն դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող, մինչեւ այդ պաշտոնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի ընտրությունը (նշանակումը): Անահիտ եւ Շուշանիկ Ջուլհակյանները հեռու ազգակիցներ են: Բերդ քաղաքից հայտնեցին, որ Շուշանիկը մասնագիտությամբ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի է, սակայն մինչեւ դպրոցի տնօրենի պարտականություններ կատարող նշանակվելը, 2023թ.-ից Բերդի թիվ 1 դպրոցում աշխատել է որպես փոխտնօրեն: Նա դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթին մասնակցելու արտոնագիր չունի: Մարտի 2-ից մինչեւ ապրիլի 7-ը՝ 36 օր, Անահիտ Ջուլհակյանը չէր հանձնել դպրոցի տնօրենի աշխատասենյակի բանալիները, ուստի Շուշանիկն ամբողջ օրը անց էր կացնում ազատ դասարաններում: Անահիտը դասղեկների միջոցով ծնողներին կանչում էր իր սենյակ՝ խնդիրներ քննարկելու եւ լուծում գտնելու համար, ինքն էր դասացուցակ փոխում, հրամաններ տալիս: Ջանգահարեցի Անահիտ Ջուլհակյանին, նա ասաց, որ դպրոցի կնիքը գտնվում է Շուշանիկ Ջուլհակյանի մոտ: 60-ամյա Ա. Ջուլհակյանը հայտնեց, որ ինքը մասնակցում է Բերդի թիվ 1 դպրոցի տնօրենի թափուր հաստիքը զբաղեցնելու մրցույթին, առաջին՝գրավոր փուլն անցնելու համար 2 միավոր չի հերիքել, իր կողմից աշխատանքում ուղղումներ են կատարվել, որի արդյունքում այդ փուլը հաղթահարել է: Սակայն դեռ կա մրցույթի մի փուլ: Կրթօջախում տիրող երկիշխանության վերաբերյալ նա հայտնեց, որ Շուշանիկ Ջուլհակյանի՝տնօրենի պարտականությունները կատարող լինելը չի նշանակում, որ նա դպրոցի տնօրենի պաշտոնակատար է, դրանք տարբեր կարգավիճակներ են: Անահիտի խոսքերով՝ իր տնօրեն լինելն «ընթացքի մեջ է», ինքը տնօրենի հաստիքը զբաղեցնելու մրցույթում է, այժմ դպրոցում ինքը աջակցում, խորհրդատվություն է իրականացնում: Բերդի թիվ 1 հիմնական դպրոցից հայտնեցին, որ ապրիլի 7-ին՝ օրվա երկրորդ կեսին, Անահիտ Ջուլհակյանը տնօրենի աշխատասենյակի բանալիները հանձնել է Շուշանիկին, ինքն էլ իր հաշվին 1 ամսով արձակուրդ վերցրել:

ՎԻՐԱՎՈՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ

Ապրիլի 6-ի երեկոյան Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Բաղանիս գյուղի ավտոգազալցավորման ճնշման կայանում (ԱԳԼՃԿ) լիցքավորվող ավտոմեքենայի գազի բալոնը պայթել է, որի հետեւանքով կայանի գազալիցքավորողը վնասվածքներով տեղափոխվել է Նոյեմբերյանի բժշկական կենտրոն: Նոյեմբերյանի ԲԿ-ից տեղեկացա, որ պայթյունից վիրավորված Կողբ գյուղի բնակիչը բուժման համար տեղափոխվել է Երեւանի բժշկական կենտրոններից մեկը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՔՍՏԸ

Թշնամին կրել է անվիճելի, ռազմական եւ ջախջախիչ պարտություն իր վախկոտ, անօրինական եւ հանցավոր պատերազմում Իրանի ժողովրդի դեմ:

Իսլամական հեղափոխության առաջնորդի՝ Այաթոլլահ Իմամ Սեյեդ Ալի Խամենեիի (խաղաղություն նրան) նահատակված մաքուր եւ անմեղ արյան շնորհիվ, Իսլամական հեղափոխության գերագույն առաջնորդ եւ Իրանի զինված ուժերի գերագույն հրամանատար այաթոլլահ Սեյեդ Մոջթաբա Խամենեիի (Աստված պահպանի նրան) քայլերի, ճակատներում իսլամի մարտիկների պայքարի եւ քաջության, եւ հատկապես պատերազմի առաջին օրերից ձեր՝ սիրելի ժողովրդի պատմական, մնայուն եւ էպիկական ներկայության շնորհիվ, Իրանը հասավ մեծ հաղթանակի եւ ստիպեց հանցավոր Ամերիկային ընդունել իր 10 կետից բաղկացած ծրագիրը: Այդ ծրագրով Միացյալ Նահանգները սկզբունքորեն պարտավորվում է երաշխավորել չհարձակման քաղաքականությունը, շարունակել Իրանի վերահսկողությունը Հորմուզի նեղուցի վրա, ընդունել ուրանի հարստացումը, վերացնել բոլոր առաջնային եւ երկրորդային պատժամիջոցները, դադարեցնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եւ ԱՏԷՄԳ կառավարման խորհրդի բոլոր բանաձեւերը, փոխհատուցում վճարել Իրանին, դուրս բերել ամերիկյան մարտական ուժերը տարածաշրջանից եւ դադարեցնել պատերազմը բոլոր ճակատներում, այդ թվում՝ հերոսական լիբանանյան իսլամական դիմադրության դեմ:

Մենք շնորհավորում ենք Իրանի ողջ ժողովրդին այս հաղթանակի կապակցությամբ եւ ընդգծում, որ մինչեւ այս հաղթանակի մանրամասների վերջնականացումը անհրաժեշտ է պահպանել հաստատակամությունն ու խոհեմությունը, ինչպես նաեւ ազգային միասնությունն ու համերաշխությունը:

Իսլամական Իրանը, Լիբանանի, Իրաքի, Եմենի եւ օկուպացված Պաղեստինի խիզախ դիմադրության ուժերի հետ միասին, վերջին 40 օրում այնպիսի հարվածներ է հասցրել թշնամուն, որոնք երբեք չեն մոռացվի համաշխարհային պատմական հիշողության մեջ: Իրանը եւ դիմադրության առանցքը, որպես պատվի եւ մարդկայնության ներկայացուցիչներ, պատմական մարտից հետո ծանր հարվածներ են հասցրել թշնամու ուժերին, ենթակառուցվածքներին, տնտեսական, տեխնոլոգիական եւ ռազմական կարողություններին՝ հասցնելով նրան հուսահատության եւ հանձնվելու եզրին:

Պատերազմի առաջին օրը թշնամիները կարծում էին, թե արագ կկարողանան հասնել լիակատար ռազմական գերակայության եւ քաղաքական ու սոցիալական անկայունության միջոցով ստիպել Իրանին հանձնվել: Նրանք կարծում էին, թե Իրանի հրթիռային եւ անօդաչու հարվածները արագ կդադարեն եւ չէին հավատում, որ Իրանը կարող է այդքան հզոր պատասխան տալ տարածաշրջանային մասշտաբով:

Համաշխարհային «սիոնիզմը» համոզել էր ամերիկյան ղեկավարությանը, որ այս պատերազմը կավարտի Իրանը: Նրանք երազում էին բաժանել երկիրը, թալանել նրա նավթն ու հարստությունը եւ տարիներով թողնել քաոսի ու անկայունության մեջ:

Չնայած իրենց առաջնորդի նահատակությանը, դիմադրության մարտիկները, ապավինելով Աստծուն, որոշեցին պատմական դաս տալ թշնամուն, վրեժ լուծել եւ ստեղծել պայմաններ, որպեսզի թշնամին ընդմիշտ հրաժարվի Իրանի դեմ ագրեսիայի գաղափարից:

Այս ռազմավարությամբ եւ երկրում ստեղծված աննախադեպ միասնության շնորհիվ Իրանը եւ դիմադրության ուժերը սկսեցին պատմության ամենածանր համակցված մարտերից մեկը ԱՄՆ-ի եւ «սիոնիստական ռեժիմի» դեմ եւ հասան իրենց բոլոր նպատակներին:

Իրանը գրեթե ամբողջությամբ ոչնչացրեց տարածաշրջանում ամերիկյան ռազմական համակարգը, մեծ վնաս հասցրեց թշնամու ենթակառուցվածքներին, մեծ կորուստներ պատճառեց ամերիկյան բանակին եւ ճնշում գործադրեց բոլոր ճակատներում՝ ստիպելով թշնամուն արդեն պատերազմի առաջին 10 օրից հետո հասկանալ, որ հաղթանակ հնարավոր չէ, եւ դիմել հրադադարի խնդրանքով:

Իրանի ժողովուրդը պետք է իմանա, որ մեկ ամսից ավելի թշնամին աղերսում էր դադարեցնել պատերազմը, սակայն Իրանը մերժել է այդ բոլոր առաջարկները՝ շարունակելով պատերազմը մինչեւ նպատակների լիարժեք իրականացումը:

Այժմ մենք Իրանի մեծ ժողովրդին հայտնում ենք բարի լուր՝ պատերազմի գրեթե բոլոր նպատակները ձեռք են բերվել, եւ թշնամին կանգնած է պատմական պարտության առաջ: Իրանը որոշել է շարունակել պայքարը այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է՝ իր ձեռքբերումները ամրապնդելու համար:

Համաձայն գերագույն առաջնորդի խորհրդի եւ Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի որոշման՝ որոշվել է բանակցություններ անցկացնել Իսլամաբադում՝ մանրամասները վերջնականացնելու համար, առավելագույնը 15 օրվա ընթացքում:

Իրանը մշակել է 10 կետից բաղկացած ծրագիր եւ ներկայացրել այն ԱՄՆ-ին՝ Պակիստանի միջոցով՝ ընդգծելով Հորմուզի նեղուցի վերահսկումը, պատժամիջոցների վերացումը, ամերիկյան զորքերի դուրսբերումը, փոխհատուցումը եւ այլ կետեր:

Պակիստանի վարչապետը հայտնել է, որ ԱՄՆ-ը ընդունել է այս սկզբունքները որպես բանակցությունների հիմք:

Բանակցությունները կմեկնարկեն Իսլամաբադում՝ ապրիլի 11-ին եւ կտեւեն երկու շաբաթ: Սա չի նշանակում պատերազմի ավարտ, եւ այն կավարտվի միայն բոլոր պայմանների լիարժեք կատարման դեպքում:

Այս ընթացքում անհրաժեշտ է պահպանել ազգային միասնությունը եւ աջակցել բանակցային գործընթացին:

Եթե բանակցություններում թշնամու պարտությունը վերածվի քաղաքական հաջողության, մենք միասին կնշենք այս պատմական հաղթանակը, հակառակ դեպքում կշարունակենք պայքարը մինչեւ վերջ: Մեր ձեռքերը զենքի վրա են, եւ թշնամու ցանկացած սխալ կպատժվի ամբողջ ուժով:

Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդ

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀԿ-Ն ԱՄՓՈՓՈՒՄ Է

ՀՀԿ-ն ամփոփում է նախկին նախագահ Սերժ Սարգսյանի հաշվետու զեկույցը կուսակցության 18-րդ համագումարում.

«Top-10՝ Սերժ Սարգսյանի ուղերձից.

1. Պատկերացնու՞մ եք՝ պատերազմ բերածները պատերազմ բերողներ են փնտրում: Արցախ հանձնածները Արցախ հանձնողներ են փնտրում: Չնայած ինչո՞ւ եմ զարմանում, մինչեւ հիմա էլ նիկոլ բերածները նիկոլ բերողներ են փնտրում:

2. Մենք չպետք է վարանենք եւ պարտավոր ենք խոսել մեր սխալների ու ձախողումներ մասին: Եվ սա առաջին նման դեպքը չէ: Մեր կուսակցության օրինակով կարող ենք ասել, որ սխալների վերլուծությունը ոչ թե թուլացնում է, այլ զորացնում:

3. Մենք, ընդդիմադիրներս, մնացինք մասնատված, կասկածամիտ միմյանց հանդեպ՝ կրելով հին հակասությունների բեռը, մինչդեռ նավը շարունակվում է խորտակվել:

4. Ազգային ուժերս, այս տարիների ընթացքում հայրենավաճառ գործող կառավարիչների դեմ կանգնած առանձին հատվածներ էինք, բայց ամբողջական այլընտրանք չդարձանք:

5. Կապիտուլյանտը ժամանակին մեղադրում էր, թե գործող Սահմանադրությունը «Սերժ Սարգսյանի հագով կարված կոստյում է», իսկ հիմա արի ու տես՝ պատրաստվում է մեր Սահմանադրությունից «Ալիեւի հագով կոստյում կարել»:

6. Պետք է նաեւ ինքներս մեզ հարցնենք՝ ինչո՞ւ է միջազգային հանրությունն այդպես վարվում: Պատասխանը դաժան է. որովհետեւ Հայաստանը կորցրել է իր արժանապատվությունը:

7. Ես թույլ եմ տվել սխալներ, ինչպես այս երկրի վրա ցանկացած մարդ, եւ ընդունել եմ որոշումներ, որոնցով իրական արդյունք եմ ապահովել իմ երկրի ու ժողովրդի համար:

8. Այո, մենք՝հանրապետականներս, կատարյալ չենք, բայց ազնիվ ենք: Ազնիվ ենք մեր անցյալի, մեր ներկայի եւ առջեւում սպասվող մարտահրավերների հանդեպ: Ազնիվ ենք ինքներս մեր եւ մեր ժողովրդի հանդեպ:

9. 2026 թվականի Հանրապետական կուսակցությունը 2016 թվականի Հանրապետական կուսակցությունը չէ: Մենք ավելի փորձառու ենք, ավելի իմաստուն, ավելի բյուրեղացած ու թրծված եւ ավելի իրատես:

10. Մենք մենք ենք՝ մեր անցյալով ու ներկայով, մեր դավանած արժեքներով ու հավատքով: Մենք աստվածասեր ենք, իսկ ինչասե՞ր եք դուք: Մենք մեր ժողովրդինն ենք, իսկ ո՞ւմն եք դուք: Մենք հայ ենք, իսկ ո՞վ եք դուք»:

● *Ըստ վիճակագրության՝ ապրիլի 6-ից 7-ը հանրապետությունում բացահայտվել է բնակարանային գողության 4 դեպք:*

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

20 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայէկոնոմբանկը եւ Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկը (ՍԾԱԶԲ) ստորագրել են 20 մլն ԱՄՆ դոլարի վարկային նոր համաձայնագիր՝ խորացնելով իրենց բազմամյա համագործակցությունը: Ներգրավված միջոցներն ուղղվելու են Հայաստանում ՓՄՁ-ների զարգացմանը եւ նրանց գործունեության ընդլայնմանը:

«Այս ռեսուրսն ավելին է, քան պարզապես ֆինանսական գործիք. այն ռազմավարական ներդրում է Հայաստանի տնտեսական ապագայում: Հնարավորություն տալով Հայէկոնոմբանկին ընդլայնել ՓՄՁ-ների վարկավորումը՝ մենք օգնում ենք տեղական բիզնեսին զարգանալ ամուր հիմքերի վրա՝ խթանելով նորարարությունը, աջակցելով աշխատատեղերի ստեղծմանը եւ ամրապնդելով երկարաժամկետ տնտեսական դիմակայունությունը», - նշել է ՍԾԱԶԲ նախագահ Սերհատ Քյոքսալը՝ հավելելով, որ «այս նախաձեռնությունն ընդգծում է ավելի դինամիկ եւ ներառական տնտեսություն կերտելու ընդհանուր հանձնառությունը»:

Հայէկոնոմբանկի Գործադիր տնօրեն Արտակ Առաքելյանը նշել է. «Մեր շնորհակալությունն ենք հայտնում Հայէկոնոմբանկի եւ ՍԾԱԶԲ-ի միջեւ ձեւավորված ռազմավարական համագործակցության համար: Այս հինգերորդ համաձայնագիրը Հայէկոնոմբանկին թույլ կտա բավականին մարտահրավերային ժամանակաշրջանում ՓՄՁ-ներին տրամադրել երկարաժամկետ ֆինանսավորում՝ մրցակցային պայմաններով: Մենք երախտագիտությամբ ենք հիշում անցյալ տարի Երեւանում ՍԾԱԶԲ-ի կողմից կազմակերպված «Խթանելով տարածաշրջանային առաջընթացը» խորագրով բիզնես համաժողովը եւ դրա շրջանակում ստորագրված նախորդ վարկային համաձայնագիրը»:

Հայէկոնոմբանկի եւ ՍԾԱԶԲ-ի համագործակցությունը սկսվել է 2007 թվականին: Մինչ օրս 5 վարկային համաձայնագիր է կնքվել՝ ընդհանուր 60 մլն ԱՄՆ դոլար ծավալով:

Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի (ՍԾԱԶԲ) մասին. ՍԾԱԶԲ-ն միջազգային ֆինանսական կազմակերպություն է՝ հիմնադրված Ալբանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի,Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի, Ռումինիայի, Ռուսաստանի, Թուրքիայի եւ Ուկրաինայի կողմից: ՍԾԱԶԲ-ի գլխամասային գրասենյակը գտնվում է Հունաստանի Սալոնիկ քաղաքում: ՍԾԱԶԲ-ն աջակցում է տնտեսական զարգացմանը եւ տարածաշրջանային համագործակցությանը՝ տրամադրելով վարկեր, վարկային գծեր, սեփական կապիտալ եւ երաշխիքներ անդամ երկրներում պետական եւ մասնավոր հատվածի նախագծերի եւ առեւտրի ֆինանսավորման համար: Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 3,45 մլրդ եվրո: *(Գ)*

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԱԿԲԱ ԲԱՆԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Ակբա բանկը եւ համաշխարհային հեղինակություն ունեցող օնլայն բրոքերային հարթակներից մեկը՝ ամերիկյան Interactive Brokers-ը, ստորագրել են համաձայնագիր, որի արդյունքում Interactive Brokers-ի ծառայությունները Հայաստանում հասանելի են դարձել Ակբա բանկի միջոցով:

Այսուհետ acba digital հավելվածով ՀՀ քաղաքացի եւ ռեզիդենտ ֆիզիկական անձ հաճախորդներն հնարավորություն ունեն առանց մասնաճյուղ այցելելու բացել միջազգային արժեթղթային հաշիվ, համալրել այն եւ իրականացնել արժեթղթերի առք ու վաճառք՝ աշխարհի առաջատար ֆինանսական շուկաներում: Interactive Brokers-ի ներդրումային հարթակում acba digital-ի օգտատերերին հասանելի են ամերիկյան, եվրոպական եւ ասիական շուկաներում ցուցակված բաժնետոմսերը, պարտատոմսերն ու *ETF-ները:

Նոր ներդրումային հարթակի կարեւոր առավելություններից է նաեւ հաշվի համալրման եւ գումարի դուրսբերման հնարավորությունը՝ ակնթարթորեն եւ առանց միջնորդավճարի, ինչը ապահովում է առավել հարմարավետ եւ արագ ներդրումային փորձառություն: Interactive Brokers-ն առաջարկում է նաեւ բազմաթիվ վերլուծական գործիքներ՝ ներդրումային որոշումների կայացումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Interactive Brokers-ն առաջարկում է նաեւ բազմաթիվ վերլուծական գործիքներ՝ ներդրումային որոշումների կայացումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Գործարքների իրականացման պայմանները.

- Ամերիկյան շուկայում յուրաքանչյուր արժեթղթի/բաժնետոմսի համար՝ 0.01 ԱՄՆ դոլար, նվազագույնը՝ 4 ԱՄՆ դոլար,
- Եվրոպական շուկայում յուրաքանչյուր գործարքի համար՝ 0.1%, նվազագույնը՝ 4 եվրո,
- Ասիական շուկայում, օրինակ՝ Չինաստան, յուրաքանչյուր գործարքի համար՝ 0.1%, նվազագույնը՝ 40 HKD:

Ակբա բանկը շարունակում է զարգացնել իր թվային լուծումները՝ հաճախորդներին առաջարկելով ժամանակակից եւ արդյունավետ ֆինանսական գործիքներ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան: Միջազգային ներդրումային գործիքի ներդրմամբ Ակբա բանկը միտված է ձեւավորելու վստահելի, ապահով եւ տեխնոլոգիական միջավայր, որտեղ ներդրումները միջազգային շուկաներում դառնում են հասանելի, պարզ եւ արագ՝ առանց բանկ այցելելու անհրաժեշտության:

*ETF-ները ներդրումային «զամբյուղներ» են, որոնք հնարավորություն են տալիս մեկ գործարքով ներդրում կատարել միանգամից բազմաթիվ առաջատար ընկերությունների բաժնետոմսերում կամ այլ ակտիվներում՝ նվազեցնելով ռիսկերը:

Interactive Brokers-ը հիմնադրվել է 1978 թվականին եւ համաշխարհային մակարդակում համարվում է ոլորտի առաջատարներից մեկը:

Interactive Brokers-ը չի ուղղորդում կամ առաջարկում որեւէ բրոքերային ընկերության, երրորդ կողմի ֆինանսական խորհրդատուներին կամ հեջ ֆոնդերին՝ ներառյալ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին: Interactive Brokers-ը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի գործընկեր կամ դուստր ձեռնարկությունը չէ: Interactive Brokers-ը հաճախորդներին մատուցում է գործարքների կատարման եւ քլիրինգային ծառայություններ: Այստեղ ներկայացվող ոչ մի տեղեկատվություն չի կարող համարվել Interactive Brokers-ի կողմից որեւէ արժեթուղթ կամ ֆինանսական գործիք գնելու, վաճառելու, պահելու կամ որեւէ կոնկրետ ներդրումային ռազմավարության մեջ ներգրավվելու առաջարկություն: Interactive Brokers-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.interactivebrokers.com կայք:

Ակբա բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԼՈՒՐԵՐ

ՄԱՄՆԱԿՑԵԼ Է ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հայէկոնոմբանկը Վանաձորում մասնակցեց Հայաստանի բանկերի միության նախաձեռնած «Լոռու մարզում բիզնեսի եւ բանկային համակարգի համագործակցության հնարավորությունները եւ հեռանկարները» թեմայով մարզային համաժողովին: Ապրիլի 3-ին տեղի ունեցած համաժողովի նպատակն էր ներկայացնել բիզնեսի ֆինանսավորման գործիքները՝ միավորելով բանկային համակարգի, պետական կառույցների եւ բիզնես համայնքի ներկայացուցիչներին:

Համաժողովը մեկնարկեց «Բանկերը եւ բիզնեսը Վանաձորում» էքսպոյով, որի շրջանակում Հայէկոնոմբանկը ներկայացրեց իր ՓՄՁ քաղաքականությունը եւ ոլորտին առաջարկվող ֆինանսական գործիքները, ինչպես նաեւ մանրածախ բիզնեսին վերաբերող հարակից այլ բանկային պրոդուկտներ: Էքսպոյին հաջորդած պանելային քննարկումների ընթացքում անդրադարձ կատարվեց ֆինանսավորման հասանելիության բարելավմանը եւ բիզնեսի զարգացման հնարավորություններին, այդ թվում նաեւ պետական աջակցության եւ միջազգային ծրագրերի շրջանակում:

Լոռու մարզում Հայէկոնոմբանկի ՓՄՁ ֆինանսավորումը հիմնականում ուղղված է տեքստիլ արդյունաբերությանը, վերականգնվող էներգետիկային եւ էներգախնայողությանը, զբոսաշրջային ոլորտին, այդ թվում՝ հյուրանոցային տնտեսություններին, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտին:

Համաժողովի շրջանակում ներկայացվեց Հայէկոնոմբանկի վարկավորմամբ ընդլայնված Հայաստանի խոշորագույն կարի ֆաբրիկայի՝ «Գլորիայի» հաջողության պատմությունը: Հայէկոնոմբանկի հետ երկարամյա գործընկերությունը թույլ է տվել 2500 աշխատող ունեցող գործարանին արդիականացնել սարքավորումները եւ մեծացնել թողունակությունը:

Հայէկոնոմբանկը կարեւորում է մարզերում բիզնես հնարավորությունների բացահայտմանը նվիրված նմանօրինակ միջոցառումները՝ նշելով, որ Լոռու մարզում անցկացված համաժողովը նոր գործընկերությունների հարթակ դարձավ:

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՄԻՆՉԵՎ 25% IDCOIN

Հերթական ճամփորդությունը պլանավորելիս առաջինը սկսում ենք մեր ֆինանսներից՝ որքան գումար կարող ենք տրամադրել այս ճամփորդությանը, ինչպես գտնել շահավետ առաջարկներ եւ նոր երկրներ բացահայտելիս նաեւ խնայել:

Եւ ահա, երբ սկսում ենք մտածել գարնանային եւ ամառային հերթական ճամփորդությունների մասին, պլանավորում ենք՝ ուր գնալ եւ որտեղ հանգստանալ,

IDBank-ը ներկայացնում է իր բացառիկ եւ idcoin-աշատ նոր առաջարկը:

IDBank-ը մեկնարկում է «All Airlines» արշավը, որի շրջանակում 2026 թվականի ապրիլի 8-ից մինչեւ հունիսի 30-ը ներառյալ Visa Platinum, Travel, Visa Signature, Visa Infinite եւ Visa Infinite Special Edition քարտապանները ավիատոմս գնելու դեպքում կարող են ստանալ մինչեւ 25% idcoin:

Արշավին կարող են մասնակցել ինչպես արդեն գործող, այնպես էլ արշավի ընթացքում պատվիրված համապատասխան քարտերի քարտապանները: Յուրաքանչյուր քարտապան կարող է ստանալ առավելագույնը մինչեւ 25 000 idձoin ամսական (հարկումից հետո)՝ անկախ իր քարտերի քանակից:

Կարեւոր է նշել, որ տուրիստական ընկերությունից կամ տուրիստական ընկերության միջոցով գնված ավիատոմսերի դիմաց վճարումները չեն մասնակցում արշավին: Իսկ idcoin-ի փոխանցումն իրականացվելու է, եթե վաճառակետն ունի համապատասխան MCC, հակառակ դեպքում քարտապանը պետք է դիմի Բանկին՝ idcoin ստանալու համար:

Արշավը գործում է բոլոր ավիաընկերություններից ավիատոմսի գնման համար:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՉԵՂԱՐԿՎԵԼ Է

ՔԱՆՅԵ ՈՒԵՍԹԻՆ ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Այս տարվա ամառային Wireless փառատոնը չեղարկվել է այն բանից հետո, երբ գլխավոր հեղլայներ Քանյե Ուեսթին արգելել են ժամանել Մեծ Բրիտանիա:



Կառավարությունը հրաժարվել է թույլատրել Ուեսթի (որը այժմ հայտնի է որպես Ye) մուտքը երկիր՝ այս ամառ Լոնդոնում նախատեսված նրա ելույթի շուրջ բարձրացած հակազդեցության պատճառով:

Վերջին տարիներին Ուեսթը բազմիցս առաջացրել է հասարակական վրդովմունք՝ իր հակասեմական, ռասիստական եւ նացիզմին աջակցող մեկնաբանությունների պատճառով:

Wireless փառատոնը հայտարարություն է տարածել, ըստ որի՝ միջոցառումը չեղարկվում է, եւ բոլոր տոմսատերերին գումարները կվերադարձվեն: Նշվել է նաեւ, որ Ուեսթին հրավիրելուց առաջ խորհրդակցել են «բազմաթիվ շահագրգիռ կողմերի» հետ, եւ այդ պահին որեւէ մտահոգություն չի բարձրաձայնվել:

Հայտարարության մեջ ասվում է.

«Հակասեմականությունը ցանկացած ձեւով զզվելի է, եւ մենք գիտակցում ենք, թե որքան իրական ու անձնական ազդեցություն են ունեցել այս խնդիրները:

Ինչպես Ye-ն այսօր նշեց, միայն խոսքերը բավարար չեն, եւ, այնուամենայնիվ, նա հույս ունի հնարավորություն ստանալ՝սկսելու երկխոսություն Մեծ Բրիտանիայի հրեական համայնքի հետ»:

Երեքշաբթի օրը կեսօրին վաճառքի հանված նախնական տոմսերը, ըստ տեղեկությունների, ամբողջությամբ սպառվել են, իսկ ընդհանուր վաճառքը նախատեսված էր չորեքշաբթի:

Նույն օրը Մեծ Բրիտանիայի ներքին գործերի նախարարությունը հայտնել է, որ ռեփերը երկուշաբթի դիմել էր երկիր մուտք գործելու համար՝էլեկտրոնային ճանապարհորդական թույլտվության (ETA) միջոցով:

Մերժումը հիմնավորվել է նրանով, որ նրա ներկայությունը չի համապատասխանում հանրային շահին:

Մեծ Բրիտանիա այցելելու համար անհրաժեշտ է ETA այն անձանց համար, ովքեր կարճաժամկետ (մինչեւ 6 ամիս) այցի համար վիզայի կարիք չունեն կամ չունեն ներգաղթի կարգավիճակ:

Ուեսթը նախկինում եւս քննադատության է արժանացել իր հայտարարությունների համար: 2022-ին նա սոցիալական ցանցերում գրել էր, որ պատրաստվում է «death con 3 անել հրեաների դեմ»: Նույն թվականին նա նաեւ ասել էր փոդքաստում. «Ես Հիտլերի մեջ լավ բաներ եմ տեսնում»:

2025-ի մայիսին նա թողարկել էր «Heil Hitler» անունով երգ եւ վաճառել սվաստիկայով շապիկներ:

Վերջերս ռեփերը փորձել է վերադառնալ հանրային հիմնական ուշադրության կենտրոն՝ներողություն խնդրելով իր գործողությունների համար «Wall Street Journal»-ում հրապարակված երկար հայտարարությամբ:

Անցած շաբաթ նա Լոս Անջելեսում երկու լրիվ վաճառված համերգ է ունեցել՝ասելով հանդիսատեսին.

«Այսօր մենք այս ամենը թողնելու ենք հետեւում, չէ՞ Լոս Անջելես»:

Երեքշաբթի նա նաեւ նշել էր, որ «երախտապարտ կլինի» անձամբ հանդիպելու Մեծ Բրիտանիայի հրեական համայնքի անդամների հետ՝ «լսելու» համար:

«Գիտեմ՝ խոսքերը բավարար չեն: Պետք է գործերով ցույց տամ փոփոխությունը», - ասել էր նա:

Wireless փառատոնի կազմակերպիչ Festival Republic-ի տնօրեն Մելվին Բենը նշել էր, որ փորձել են կապ հաստատել հրեական կազմակերպությունների հետ, սակայն, ըստ նրա, նրանք հրաժարվել են հանդիպումից:

Ի պատասխան՝ հրեական կառույցները հայտարարել են, որ նման առաջարկը չեն մերժել եւ պատրաստ են եղել քննարկման:

Միեւնույն ժամանակ, նրանք ընդգծել են, որ Ուեսթի հրավերը պետք է չեղարկվեր անկախ որեւէ հանդիպումից:

Վերջիվերջո, որոշումը կայացվել է կառավարության կողմից՝դուրս բերելով հարցը թե՛ Ուեսթի, թե՛ կազմակերպիչների վերահսկողությունից:

Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը հայտարարել է.

«Քանյե Ուեսթը երբեք չպետք է հրավիրվեր Wireless-ի գլխավոր կատարող լինելու համար»:

Նա հավելել է, որ կառավարությունը կանգնած է հրեական համայնքի կողքին եւ շարունակելու է պայքարել հակասեմականության դեմ:

Առողջապահության նախարար Ուես Սթրիթինգը Ուեսթի ներողությունը անվանել է «անիմաստ եւ ինքնանպատակ»:

Քննադատություններ են հնչել նաեւ այլ քաղաքական գործիչների կողմից, ովքեր ընդգծել են, որ նրա նախկին հայտարարությունները անընդունելի են:

Հրեական կազմակերպությունները ողջունել են կառավարության որոշումը՝ այն անվանելով խելամիտ քայլ:

Միեւնույն ժամանակ, հասարակության կարծիքները բաժանվել են:

Որոշ երկրպագուներ նշել են, որ որոշումը ճիշտ է՝հաշվի առնելով Ուեսթի երկարամյա վարքագիծը: Մյուսները դժգոհել են՝ այն դիտելով որպես խոսքի ազատության սահմանափակում:

Ոմանք նշել են, որ նման հարցերում մարդիկ պետք է «քվեարկեն իրենց դրամով»՝պարզապես չգնելով տոմսեր, եթե չեն համաձայնում արտիստի հետ:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՇԱՏ ՀԱՋՈՂ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ

Լեհաստանի Կատովիցե քաղաքում մեկնարկել է Եվրոպայի շախմատի անհատական առաջնությունը: Պայքարին մասնակցող 43 երկրների 502 շախմատիստներից 15-ը ներկայացնում է Հայաստանը: Մեկնարկային տուրում Շանթ Սարգսյանը հաղթել է Անտոն Զլատկովին (Մակեդոնիա), Հայկ Մարտիրոսյանն առավելության է հասել լեհ Ալիսա Սլիվիցկայի, Գաբրիել Սարգսյանը՝ լեհ Պատրիկ Ռեբուկի նկատմամբ: 1 միավոր է վաստակել նաեւ Մանուել Պետրոսյանը, որը հաղթել է վրացի Գիգա Գոդերձիշվիլուն, իսկ Ռոբերտ Հովհաննիսյանը՝ թուրք Ույգար Դուրուկային: ԵԱ-ում վստահ է մեկնարկել նաեւ Արսեն Դավթյանը, որն ուժեղ է եղել Անդրեաս Բասիլիուս Գիկասից (-Գերմանիա), Արթուր Դավթյանը Մաեւլան Բիտբոլ-Դելավեյնից (Ֆրանսիա),-Մամիկոն ՂարիբյանըԱնաստասիա Խնատուշինից (Ուկրաինա): Հաղթանակների շարքը շարունակել են Էմին Օհանյանը, Ռոբերտ Փիլիպոսյանը, Մարիամ Մկրտչյանը, Հայկ Երիցյանը եւ Վահե Սուքիասյանը:

ՀԱՆԴԵՍ ԿԳԱ 9 ՀԱՅ

Բրազիլական Ֆոս դու Իգուասու քաղաքում ապրիլի 20-26-ը կայանալու է բռնցքամարտի Աշխարհի գավաթի առաջին փուլը: Մրցաշարում հանդես է գալու նաեւ Հայաստանի հավաքականը: Կանանց թիմում ընդգրկված են Անուշ Գրիգորյանը (51 կգ) եւ Էլիդա Քոչարյանը (65 կգ): Տղամարդկանց պայքարում ելույթ կունենան Ռուդոլֆ Գարբոյանը (50 կգ), Ժիրայր Սարգսյանը (55 կգ), Արթուր Բազեյանը (60 կգ), Արթուր Սահակյանը (65 կգ), Արարատ Հարությունյանը (70 կգ), Նարեկ Մանասյանը (90 կգ) եւ Դավիթ Չալոյանը (+90 կգ): Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայից տեղեկանում ենք, որ թիմն ուսումնամարզական հավաք է անցկացնում Երեւանում ու մրցավայր կմեկնի ապրիլի 17-ին:

ԼԱՎ ԱՐԴՅՈՒՆՔ Է

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «-Բավարիայի» գլխավոր մարզիչ Վենսան Կոմպանին մեկնաբանել է Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի առաջին խաղում Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «Ռեալի» նկատմամբ տարած հաղթանակը: «Գոհ ենք: «Սանտիագո Բերնաբեուում» ցանկացած հաղթանակ լավ արդյունք է: Երբեմն «Ռեալը» շատ վտանգավոր էր, բայց մենք եւս սուր էինք խաղում: Այժմ նպատակը տնային խաղում հաղթելն է: «Բավարիան» մեծ հարգանք ունի «Ռեալի» նկատմամբ: Հիանալի հասկանում ենք, թե ինչպիսի ակումբ եւ թիմ է, նաեւ հասկանում ենք, թե ովքեր ենք մենք եւ մեր ֆուտբոլիստների համար ինչ է նշանակում նման ստադիոնում խաղալն ու հաղթելը», - Կոմպանիի խոսքերը փոխանցում է ՈՒԵՖԱ-ի պաշտոնական կայքը: Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի առաջին խաղում Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիան» հյուրընկալվեց Իսպանիայի փոխչեմպիոն Մադրիդի «-Ռեալին» եւ հաղթեց 2:1 հաշվով: Պատասխան հանդիպումը տեղի կունենա ապրիլի 15-ին Մյունխենի «Ալյանս Արենա» մարզադաշտում:

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՆՈՐ ՁԱՅՆԻ ԿԼՈՆԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԸ

Հայկական AI լուծումներ առաջարկող VS.AM-ը ներկայացրել է Voice Clone Test գործիքը, որը թույլ է տալիս օգտատերերին ընդամենը մի քանի վայրկյան ձայնագրությամբ փորձարկել, թե ինչպես AI-ն կարող է վերարտադրել իրենց ձայնը անվտանգ եւ վերահսկվող միջավայրում: Փորձարկման համար, ըստ ընկերության, սովորաբար բավական է 5-15 վայրկյան հստակ reference audio:

Հայերեն AI speech լուծումներ մշակող VS.AM հարթակը գործարկել է Voice Clone Test նոր փորձնական գործիքը, որի նպատակն է օգտատերերին հնարավորություն տալ արագ գնահատելու voice cloning տեխնոլոգիայի որակը՝նախքան ամբողջական ծառայություն պատվիրելը: Ընկերության էջում նշվում է, որ համակարգը նախատեսված է արագ, անվտանգ եւ վերահսկվող փորձարկման համար:

Ծառայության հիմնական գաղափարն այն է, որ օգտատերը կարող է վերբեռնել կամ անմիջապես բրաուզերից ձայնագրել կարճ reference audio, ստանալ ավտոմատ տրանսկրիպցիա, անհրաժեշտության դեպքում ուղղել այն, ընտրել նախապես սահմանված հայկական demo text եւ լսել, թե ինչպես է AI-ն խոսում իր ձայնով: Փորձարկման փուլում հասանելի է նաեւ տարբեր Voice Design տարբերակների ընտրություն, այդ թվում՝տարբեր ներկայացումներ, տոնայնություններ եւ whisper տարբերակներ:

VS.AM-ը հատուկ ընդգծում է, որ սա բաց voice cloning գործիք չէ: Համակարգում ազատ տեքստ մուտքագրելու հնարավորություն չկա, եւ օգտագործվում են միայն նախապես հաստատված հայկական demo text-եր: Ընկերության ներկայացմամբ՝նման մոտեցումը կիրառվում է անվտանգության եւ էթիկական օգտագործման նպատակով, որպեսզի փորձարկումը տեղի ունենա վերահսկվող միջավայրում եւ չօգտագործվի չարաշահումների համար:

Ըստ հրապարակված նկարագրության՝ Voice Clone Test-ը կարող է օգտակար լինել ինչպես անհատների, այնպես էլ թիմերի համար: Որպես թիրախային խմբեր նշվում են մեդիա ընկերությունները, լրատվական կայքերը, content creator-ները, podcast եւ video թիմերը, ինչպես նաեւ բիզնեսներ, որոնք դիտարկում են voice brand, call center, voice bot, education, audiobook, digital content, AI avatar եւ conversational interface նախագծեր:

Ընկերությունը նաեւ տարբերակում է փորձնական գործիքը եւ ամբողջական ծառայությունը: Եթե Voice Clone Test-ի արդյունքը բավարարում է օգտատիրոջը, ապա նա կարող է անցնել Full Voice Cloning Service-ի, որը, ըստ VS.AM-ի, նախատեսված է արդեն անհատական եւ իրական օգտագործման համար, ներառում է իրավական եւ գործնական պայմանավորվածություններ եւ կարող է ինտեգրվել API-ով կամ այլ աշխատանքային հոսքերով:

VS.AM-ի հաղորդմամբ՝ ամբողջական voice cloning ծառայությունը հատկապես նպատակահարմար է բրենդային ձայն ստեղծելու, նորությունների ավտոմատ ձայնավորման, գովազդային կամ corporate audio content-ի, ինչպես նաեւ call center voice bot-երի, narration-ի եւ podcast production-ի համար: Ամբողջական ծառայության պատվերի դեպքում թիմը քննարկում է նախագծի նպատակը, օգտագործման սցենարը, իրավական կողմը, տվյալների որակը եւ առաջարկում տեխնիկական ու կոմերցիոն տարբերակներ ըստ կոնկրետ պահանջների:

Այսպիսով, VS.AM-ի նոր Armenian Voice Clone Test-ը կարող է դառնալ պարզ մուտքային կետ այն օգտատերերի եւ ընկերությունների համար, որոնք ցանկանում են արագ հասկանալ հայերեն ձայնի AI կլոնավորման հնարավորությունները եւ անհրաժեշտության դեպքում անցնել արդեն պրոֆեսիոնալ, բիզնես կիրառման ամբողջական ծառայության:

● *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 18-ին՝ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հարեւանս ապօրինի շինարարություն է անում եւ փակում իմ տան լուսավորությունը: Ի՞նչ անեմ նման դարագայում:

Մնահիտ Բաբայան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շինարարություն իրականացնելու համար անհրաժեշտ է թույլտվություն ստանալ, որի շրջանակներում էլ ստուգվում են շինարարության ժամանակ անհրաժեշտ շինարարական նորմերը: Եթե անձը շինարարության համար թույլտվություն չի ստացել կամ թույլտվությունը տրվել է շինարարական նորմերի խախտմամբ, ապա տվյալ շինարարությունը կարող է համարվել ապօրինի:

Եթե Դուք կասկածներ ունեք, որ Ձեր հարեւանն իրականացնում է ապօրինի շինարարություն, ապա կարող եք ահազանգել Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետարանի թեժ գիծ՝ 1-08 հեռախոսահամարով: Մարզերում ապօրինի շինարարություն իրականացվելու դեպքում անհրաժեշտ է զանգահարել համապատասխան մարզի մարզպետարանի հեռախոսահամարներով՝ հայտնելով կատարվածի մասին:

Կարող եք նաեւ Ձեր խնդիրների մասին զանգահարել եւ տեղեկացնել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն հետեւյալ հեռախոսահամարով՝ (010)-51-13-62, ինչպես նաեւ ՀՀ քաղաքաշինության պետական տեսչություն՝ (012) 31-77-71 հեռախոսահամարով:

Ընդ որում, հարկ է նշել, որ քաղաքացիների կողմից ապօրինի շինարարություն իրականացնելու դեպքում այդ մասին պետք է ահազանգել ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, քանի որ օրենքով սահմանված են ապօրինի շինարարության իրականացման համար պատասխանատվություն ենթարկելու վաղեմության ժամկետներ:

Քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե կարծում եք, որ չեք կարողանա թեժ գծի աշխատակիցներին ներկայացնել Ձեր ամբողջական հիմնավորումներն ու բողոքները, ապա կարող եք շարադրել դրանք գրավոր եւ ներկայացնել համայնքի ղեկավարի, քաղաքապետի կամ մարզպետի անվամբ՝ խնդրելով լուծում տալ Ձեր խնդրին: Անհրաժեշտ է Ձեր դիմումբողոքն ուղարկել փոստային ծառայության միջոցով՝ հետադարձ ծանուցմամբ, որի միջոցով Դուք կկարողանաք հավաստիանալ, որ Ձեր դիմումը տեղ է հասել: Ձեր գրավոր դիմումին կարող եք կցել շինարարության լուսանկարները:

Եթե Ձեր դիմումը մերժվի կամ Դուք դիմումի վերաբերյալ որեւէ պատասխան չստանաք, ապա կարող եք դիմել դատարան՝ վիճարկելով շինարարության օրինականությունը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինձնից գումար հափշտակելու գործը հասել է դատարան, բայց գումարս չեմ ստացել: Ո՞ւմ դիմեմ:

Գարիկ Ասատրյան, 56 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը տուժել է հանցագործության հետեւանքով եւ նրանից խարդախությամբ գումար են հափշտակել, ապա տվյալ անձը քրեական գործով ճանաչվում է որպես տուժող եւ մասնակից դարձվում թե՛ քրեական գործի նախաքննությանը եւ թե՛ դատարանում գործի քննությանը: Քրեական գործի հարուցումից հետո տուժողն իրավունք ունի քաղաքացիական հայց ներկայացնել դատարանին՝ խնդրելով դատավճիռ կայացվելու դեպքում խարդախությամբ հափշտակված գումարը հետ գանձել ամբաստանյալից հօգուտ տուժողի: Նա դրանով իսկ կստանա նաեւ քաղաքացիական հայցվորի կարգավիճակ քրեական գործով: Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է գույքային վնաս: Քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշում կարող են կայացնել հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ կախված այն հանգամանքից, թե որ փուլում է գտնվում քրեական գործի քննությունը: Դատարանում գտնվող քրեական գործի քննության ընթացքում քաղաքացիական հայցի ներկայացման դեպքում տուժողին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչում է դատարանը: Քաղաքացիական հայցվորն իր ներկայացրած հայցը պաշտպանելու նպատակով իրավունք ունի ծանոթանալ առաջադրված մեղադրանքին, տալ բացատրություններ իր ներկայացրած հայցի առիթով, ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու եւ հետազոտելու համար, հարուցել միջնորդություններ, ծանոթանալ քննչական եւ այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է, դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության եւ լրիվության կապակցությամբ, քննչական եւ այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն:

(շարունակությունը՝ հաջորդ համարում)

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Երեւանում դիզվառելիքով բարձված «Howo» բեռնատարը «Դեֆանս» թաղամասի մոտ կոտրել է կամրջի երկաթե ճաղավանդակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 - 2 - 1 + 3
	Կոտայքի լեռներ	- 2 + 2 + 2 + 4
	Կոտայքի նախալեռներ	+ 5 + 7 + 7 + 9
	Գեղարքունիք	+ 1 + 3 + 2 + 5
	Լոռի	0 - 2 0 + 3
	Տավուշ	- 1 + 1 0 + 2
	Արագածոտնի լեռներ	0 - 2 - 1 + 2
	Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 8 + 6 + 10

	Արարատ	+ 7 + 9 + 9 + 11
	Արմավիր	+ 8 + 10 +10 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 0 + 2
	Վայոց ձորի նախալեռներ	+ 7 + 11 +10 + 13
	Սյունիքի լեռներ	- 2 + 1 0 + 2
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 + 7 + 10
	Սյունիքի հովիտներ	+ 7 + 11 +20 + 24
	Երեւան	+ 9 + 11 +12 +14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **08.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*